Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գավառի թիվ 5 հիմնական դպրոց

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման գործիքները առարկայի դասավանդան շրջանակներում

Վերապատրաստող-մենթոր՝ Գոհար Շահինյան

Ուսուցիչ՝ Արփինե Թադևոսյան

ԳԱՎԱՌ -2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատումը համագործակցային տեղեկատվական գործընթաց է, որն ընդգրկում է ողջ դպրոցական համայնքը՝ սովորողներ, ընտանիքներ և սովորողների ծնողներ:

Սովորողների ուսումնառությունը կազմակերպվում է ուսումնական գործընտացի պլանավորման կատարելագործման միջոցով՝ ուղղված նրանց անհատական կամ խմբային պահամջներին:

Կրթական գնահատումը *գիտելիքների վերաբերյալ գործնական տվյալների* փաստաթղթավորման և օգտագործման համակարգված գործընթացն է :

Գնահատումը շարունակական գործառույթ է, տալիս է սովորողների ուսումնառության չափելի և հստակ վերջնարդյունքներ, միաժամանակ տրամադրելով ուսումնառության բավարար հնարավորություններ:

Գնահատումն պետք է ունենա հստակ չափորոշիչներ.հավաստիություն և հիմնավորում: Լավ գնահատականը ունի և՛ հավաստիություն և՛ հիմնավորում:

Գնահատման տվյալները կարող են ստացվել սովորողների աշխատանքի ուղղակի ուսումնասիրությունից՝ուսումնառության արդյունքների և ձեռքբերումը գնահատելու համար կամ կարող են հիմնվել այն տվյալների վրա, որոնցից կարելի է եզրակացություններ անել ուսման վերաբերյալ: Գնահատումը կարող է կենտրոնանալ անհատական սովորողի, դասարանի, կամ որպես ամբողջություն կրթական համակարգի վրա:

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է:Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: «Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ:

I ԳԼՈՒԽ
ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը, արժեքային համակարգը: Գնահատումը կարևոր դեր է խաղում սովորողների գիտելիքները արդյունավետ և նպատակաուղղված դարձնելու գործում:Գնահատումն ապահովում է հետադարձ կապուսումնական գորշընթացիմասին՝ հաբտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ տեսակներով: Այն իրականացվում է հետևյալ նպատակներով.

- Ծնողներին իրազեկել իրենց երեխաների գիտելիքների մասին՝ գնահատման միջոցով,
- Վերահսկել սովորողների ուսումնական գործունեությունը և ընդգծել ձեռքբերումները,
- Ուսուցիչներին, դպրոցի տնօրենին , ծնողներին և կրթության իրավասու մարմիններին տրամադրել հավաստի և ամբողջական տեղեկություն՝ սովորողի մասին,
- Դիտարկել և կատարելագործել ուսումնական ծրագրերի բովանդակությունը:

Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը:Գնահատման հիմնական նպատակն է.

- սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը,
- արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա՝ ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը,
- գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը:

Հանրակրթական դպրոցներում գոյություն ունեն գնահատման երկու հիմնական տեսակներ՝ ամփոփիչ և ձևավորող գնահատում: Ամփոփիչ գնահատման նպատակն է աշակերտի առաջադիմության գնահատումը ժամանակի որոշակի հատվածում և գրանցելու ու հրապարակելու առաջադիմության առկա մակարդակը: Ձևավորող գնահատման նպատակն է ստուգել աշակերտի՝ գիտելիքի յուրացման մակարդակը ժամանակի որոշակի հատվածում:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. սովորողի հիմնական գործունեության և առաջադիմության գնահատումը, կրթական մի աստիճանից մյուսին անցնման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը,
2. սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը,
3. դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը,
4. սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը,
5. սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը,
6. մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը,
7. չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը,
8. հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին,
9. սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը,
10. դպրոցի հանդեպ ծնողների վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են՝

- օբյեկտիվություն
- արդարություն
- հուսալիություն
- անկողմնակալություն
- հավաստիություն
- հիմնավորվածություն
- մատչելիություն
- թափանցիկություն

Գնահատումը իրականացվում է 10-միավորային սանդղակով: Դրական գնահատական են համարվում 4-10 միավորները: Բացի 10-միավորային համակարգից՝ ուսումնական գործընթացում կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային: Հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կարող են կիրառվել գնահատման այլ համակարգեր: Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի աճի բնութագիր: Միավորներով և ստուգարքային գնահատումը կիրառվում է սկսած երրորդ դասարանից: Տարրական դպրոցն ավարտողը ուսումնական տարվա վերջին լրացնում է հատուկ մշակված հարցարան, որը հնարավորություն է ընձեռնում պարզելու ուսումնական

գործընթացի արդյունքնում նրա ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները, ինչպես նաև մտագործունեության մակարդակը։ Այս ստուգումների արդյունքներն ունեն միայն տեղեկատվական բնույթ։ Չնավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը միավորային համակարգով չի գնահատվում:

II ԳԼՈՒԽ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայտնի են գնահատման բազմաթիվ տեսակներ: Գնահատման գործընթացի հիմնական և կարելիէ ասել միակ նպատակն է՝ գնահատել այն , ինչ ուսուցանվել է:

Ուսուցման նյութը՝ դասը, թեման կամ դասընթացները նախատեսված են հատուկ ուսումնական ծրագրով և չափորոշիչներով:

Չի բացառվում, որ ուսուցիչը իր ցանկությամբ թույլ տա որոշակի շեղումներ ծրագրից՝ եկնելով դասարանի առանձնակատկություններից կամ այլ սուբյեկտիվ հանգամանքներից:

Տվյալ դեպքում ամփոփող միջոցները պետք է համապատասխանեն դասավանդված նյութին , ոչ թե ծրագրին:

Ընթացիկ գնահատումն անընդհատ, շարունակական գործընթաց է՝ ուղղված սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտմանը:

Ըստ ժամանակի և նպատակի՝ գնահատումը լինում է՝

- Նախնական
- Ընթացիկ
- Ամփոփիչ

  Յուրաքանչյուր հետազոտության սկզբում ուսուցիչները պարզում են սովորողների նախնական գիտելիքներն ու փորձը մինչև նոր աշխատանքների ու փորձառության մեջ ընկղմվելը: Ընթացիկ ձևավորող գնահատումը տեղեկատվություն է տրամադրում ուսուցման հաջորդ փուլերն արդյունավետորեն պլանավորելու համար:
  Սովորողների ուսումնառությունը կազմակերպվում է ուսումնական գործընթացը պլանավորման կատարելագործման միջոցով՝ ուղղված նրանց անհատական կամ խմբային պահանջներին:
  Ընթացիկ գնահատումը տեղեկատվություն է հաղորդում, որպեսզի ուսուցման հաջորդ փուլերն առավելագույնս արդյունավետ լինեն:
  Նրա նպաբակը ուսուցման գործընթացի խթանումն է՝ հետադարձ սերտ կապի ապահովման միջոցով:

Ամփոփիչ գնահատումը ուսումնական գործընթացի կոնկրետ հատվածի ամփոփումն է՝ թեմայի ավարտը:ն նպատակը եւսումնական գործընթացի արդյունքների մասին տեղեկատվության ապահովումն է:

Որպեսզի գնահատումը լինի առավել արդյունավետ, կարևոր է որ այն լինի՝ արդար, համապատասխան, հավաստի, համարժեք, արժանահավատ և կառավարելի:
Գնահատումը արդյունավետ է դառնում, եթե շեշտը դրվում է արդյունավետության վրա: Ճիշտ լուծումներ գտնելու համար, ուսուցիչը պետք է գերազանց տիրապետի գնահատման գործընթացին:

Ուսումնական նյութի տիրապետման և ձեռքբերման գնահատման տեսակներն են՝

- Ցուցանիշային գնահատում
- Օբյեկտիվ գնահատում
- Սուբյեկտիվ գնահատում
- Չափանիշային գնահատում
- Կատարողականության գնահատում

1.Ցուցանիշային գնահատման դեպքում սովորողները դասակարգվում են ըստ առաջադիմության: Գտնվում են համեմատության մեջ դասարանի մյուս աշակերտների հետ: Գնահատման այս տեսակը նպատակահարմար է կիրառել.

- Ընթացիկն ուսումնական տարվա ձեռքբերումները անցած տարվա ջեռքբերումների հետ համեմատելիս:
- Դասարանը խմբերի բաժանելու , կամըստ աշակերտների ընդունակությունների նոր դասարաններ ստեղծելու համար:

Տվյալ դեպքում կարելի է նշանակել համեմատական գնահատականներ:

2.Օբյեկտիվ գնահատման դեպքում՝ առաջադրանքի պատասխանի գնահատումը կաղված չէ գնահատողի անձնական մտածողությունից, կամ վերաբերմունքից: Այլ՝ իրականացվում է հիմնականում անուղղակի միջոցներով: Այդ նպատակին են ծառայում թեստերը:

Այդպիսի թեստերից են այն թեստերը, որոնք ունեն մեկ ճիշտ պատասխան և սովորողը տարբերակներից պետք է ընտրի մեկը՝ ճիշտ տարբերակը: Անուղղակի թեստը նոընպես ունի սուբյեկտիվ տարրերէ ըստ հեղինակի վարպետությոն և մտածողության:

3.Սուբյեկտիվ գնահատումը համարվում է սուբյեկտիվ, եթե կախված է գնահատողի .

- Անձնական դատողություններից
- Սկզբունքներից
- Վերաբերմունքից

Սուբյեկտիվ են գնահատվում՝

- ✓ Բանավոր հարցումները
- ✓ Շարադրանքով առաջադրանքները
- ✓ Որոշ գործնական աշխատանքներ

Սուբյեկտիվ գնահատումը պետք է արվի հնարավորինս արդարացի, : Որոշմ չափով սուբյեկտիվության դրսևորում կա նաև թեստ կազմողի անձնական նախասիրության և թեստի է նպատակային համապատասխանության մեջ:

4.Հայտանիշային կամ չափանիշային գնահատումը հենվում է բացառապես սովորողի՝ տվյալ նյութի իմացության վրա՝ անկախ համադասարանցիների ցուցաբերած գիտելիքնեի աստիճանից:Գնահատման այս տեսակը կիրառվում է ուսումնական առարկայի տիրապետման շարունակությունն ուրվագծելու
և համապատասխան ոլորտներն ընդգծելու նպատակով:
Եթե ստուգումը կատարվում է թեստի,իջոցով, ապա այն պետք է համապատասխանի չափորոշիչային պահանջներին:

5. Կատարողականության գնահատման համար սովորողից պահանջվում է ստուգման ընթացքում գրավոր կամ բանավոր ներկայացնել առաջադրանքի կատարումը պահանջվող ձևով:
Նպատակահարմար է նաև աշխատանքի կատարումը ստուգել տվյալ նյութի տիրապետման աստիճանի տարբեր տեսանկյուններից:
Օրինակ՝

- Ընդհանրացնել նյութը
- Կարծիք հայտնել:

III ԳԼՈՒԽ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ՝ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ինչպես գիտենք՝ Գնահատման նպատակը ուսուցիչների համար սովորողների մասին որոշումներ կայացնելն է՝ թե՛ որպես խումբ, թե՛ որպես անհատ:

Գնահատումը պետք է սկսել ուսումնական նպատակներից: Կարելի է գնահատման գործընթացի կարևորությունն հասկանալ Լ. Ա. Սենեկայի հայտնի խոսքերով՝

«Եթե մարդ չգիտի, թե դեպի որ նավահանգիստ է նավարկում, ապա նրա համար ոչ մի քամի էլ նպաստավոր չէ»:

Ուսուցման արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչով սահմանված վերջարդյունքներն համապատասխան ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:

(ՀՊՉ, IX, կետ 37)

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումն իրականացվում է **քանակական (միավորային)**
և ձևավորող (ուսուցանող) ձևերով:

Ուսուցանող / ձևավորող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված բացթողումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթացն է, ինչպես նաև հետադարձ կապի կիրառմամբ ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը: Ուսուցանող գնահատման նպատակն է՝

- բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը

- բացահայտել, վեր հանել ուսումնական նյութի յուրացման հետ կապված խնդիրները,
- սովորողին ուղղորդել տվյալ նյութը սովորելու, բացթողումները շտկելու
- անհրաժեշտության գիտակցմանը, ճշգրտել կիրառվող դասավանդման

ռազմավարությունների և մեթոդների

- նպատակահարմարությունը

Ուսուցանող գնահատումը կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում. սա անընդհատ իրականացվող գործընթաց է, քանի որ ուսուցանելու, գիտելիքներ և դրանց հիման վրա որոշակի կարողություններ ձևավորելու միտում ունի և չունի նիշային գնահատման նպատակ: Ձևավորող գնահատման օգնությամբ ուսուցիչը մշտապես դիտարկում, գրանցում, նկարագրում և պարբերաբար տեղեկացնում է սովորողի ձեռքբերումների, նրա ուժեղ և թույլ կողմերի մասին: Ուսուցանող գնահատման նպատակով միջին դպրոցում կիրառվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝ ինքնուրույն աշխատանք, բանավոր ելույթ, կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստ, ուսուցանող ստուգում, ստուգող հարցաթերթ, բաց հարցերով քննարկում, խմբային, զույգային համագործակցային աշխատանքներ, գործնական աշխատանք, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, թղթապանակի բովանդակության գնահատում, հաշվետվության ներկայացում և այլն: Ուսուցանող գնահատման առաջադրանքների բովանդակությունը, տեսակը, առարկայական չափորոշիչներով ներկայացվող պահանջներին համապատասխանությունը, իրակացման հաճախականությունը, ուսուցչի դիտարկումների ձևաչափը մշակվում են յուրաքանչյուր ուսուցչի կողմից:

Ուսումնական առաջադիմության բարձրացման, արդյունավետ ուսումնական գործընթացի ապահովման նպատակով դպրոցում կարևորվում է ընթացիկ աշխատանքների մշտադիտարկումը, մասնավորապես՝ դասի մասնակցությունը /ներգրավվածությունը, յուրացման առաջադրանքների կատարումը, պարբերաբար իրականացվող ուսուցանող/ձևավորող աշխատանքների և դրանց անդրադարձի կատարումը:

Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշիչների: Միավորային գնահատման նպատակը սովորողի առարկայական գիտելիքների և դրանց հիման վրա ձևավորված կարողությունների մակարդակի բացահայտումն է: Այն կիրառվում է սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման աստիճանը ստուգելիս: Միավորային գնահատումն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու , հաշվառելու միջոցով և ունի վերահսկող դեր: Այն ունի նաև ախտորոշիչ դեր. ուսուցիչը կարողանում է ճշտել ամեն

սովորողի ձեռքբերումների որակը և մակարդակը, ապա ըստ այդմ՝ որոշակի փոփոխություններ մտցնել դասավանդման եղանակների, ուսուցման տեխնոլոգիաների և կիրառվող մեթոդների ոլորտում: Եթե աշակերտը հարգելի պատճառով բացակայել է և չի կատարել միավորային գնահատման առաջադրանքը, ապա դպրոց ներկայանալուց հետո, առնվազն երկու շաբաթվա ընթացքում պետք է լրացնի բաց թողնված աշխատանքը: Եթե միավորային գնահատման առաջադրանքը կատարելիս սովորողը խախտում է ակադեմիական ազնվության կանոնները (հուշարարություն, գրագողություն, արտագրություն ընկերոջից կամ այլ աղբյուրներից), ապա ուսուցիչը նրան զրկում է աշխատանքը շարունակելու իրավունքից և ստանում է նվազագույն միավոր՝ 0 (զրո), նախատեսված բոլոր չափանիշներից՝ առանց աշխատանքը վերահանձնելու իրավունքի:

Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման ձևերն ու հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի ձևերով և հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր տեսակների ու ձևերի հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

Սովորողի գործուն ընդգրկվածությունը ենթադրում է.

- ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,
- սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,
- ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին և այլն), որպեսզի

ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Այսպիսով՝ ձևավորող գնահատումը արժանահավատ տվյալներ փնտրելու և մեկնաբանելու գործընթաց է, որոնք սովորողն ու ուսուցիչը օգտագործում են, որպեսզի պարզեն, թե որտեղ են գտնվում իրենք ուսումնառության գործընթացում, որ ուղղությամբ և ինչպես է պետք շարժվել լավագույն արդյունքի հասնելու համար:

Ձևավորող գնահատման շնորհիվ՝ սովորողը տեղեկանում է իր առաջադիմության ընթացքի ու որակի մասին իսկ ուսուցիչը՝ ինչն է սովորողը յուրացրել, ինչպիսի դժվարություններ ունի, և ինչը պետք է վերանայի ուսուցման գործընթացում:

Ձևավորող գնահատումը *չի օգտագործվում* աշակերտին գնահատականներ կամ նիշեր տալու համար:

Ինչպես արդեն նշվեց, գնահատման հաջորդ ձևը ամփոփիչ գնահատումն է : Այն օգտագործվում է սովորողի առաջադիմությունը կանոնավոր կերպով գրանցելուհամար: Այն անցկացվում է *ուսումնական տարբեր փուլերի ավարտին*:

Որպեսզի գնահատենք աշակերտին կամցանկացած անձի որևէ գործունեություն , հարկավորէ չափել այն: Դրա համար նախ պետք է որոշենք, թե ի՞նչ ենք չափում, ինչո՞ւ ենք չափում, ինչպե՞ս ենք չափում: «Չափումը » գնահատականի թվանշային արտահայտությունն է, թվերի համակարգված վերագրումը անհատին կամ անհատի գործունեության արդյունքին : Ուսումնառության գործընթացում թեստի կիրառումը հանդիսանումէ սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և չափման գործիք: Թեստային ստուգումն ունի մի շարք առավելություններ՝

- Հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր չափաբաժիններով ստուգել մեծ ածավալի ուսումնական նյութ
- Արագ գնահատել մեծ թվով սովորողների ուսումնական նյութի յուրացման աստիճանը
- Նվազեցնում է սուբյեկտիվ գործոնի աստիճանը

Թեստը խնամքով ընտրված ուղղորդող ցուցումներով առաջադրանքների շարք է աշակերտներին գնահատելու և ուսման արդյունքը արժևորելու նպատակով: Թեստը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի առաջադրանքներից , որոնք էլ իրենց հերթին՝ տարբեր հարցերից ու կետերից:

Յուրաքանչյուր կետ բացահայտում է տվյալ առաջադրանքը կատարողի ունակություններն ու հմտությունները: Շատ կարևոր է, որ թեստում պահանջը ձևակերպվի պարզ , հստակ և միանշանակ:

Կախված թեստին պատակից՝ տարբերակում ենք թեստի հետևյալ տեսակները՝ ձևավորող, հայտորոշիչ և ամփոփիչ :

Ձևավորող թեստերը հիմնականում նպատակ ունեն խթանել և օգնել սովորողին բարելավելու իր առաջադիմությունը: Դրանք հնարավորություն են տալիս ուսուցչին պարզել ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարություններն ու բացթողումները՝ ապահովելով հետադարձ կապը: Հարցերը պետք է լինեն ուսուցանող բնույթի : Աշակերտի ցանկացած պատասխա նընդունելի է : Անգամ եթե այն չի գոհացնում ուսուցչին , միևնույն է , ուսուցիչն արժևորում է այն : Սովորողի պատասխանին ուսուցչի արձագանքը չի կարող լինել «այո» կամ «ոչ», այն պետք է ուղեկցվի մեկնաբանություններով, այսինքն՝ ուսուցանող լինի : Հայտորոշիչ թեստը ձևավորող թեստի մի տեսակ է , որն անցկացվում է ուսումնառության սկզբում կամ ընթացքում , սովորողի թույլ կողմերը հայտնաբերելու , ուսուցումը բարելավելու համար : Հայտորոշիչ թեստերը լինելով ձևավորող գնահատման և ստուգման ձև , հաճախ անցկացվում են նոր թեմա անցնելուց առաջ՝ սովորողի նախնական իրազեկության աստիճանը պարզելու և դրա հիման վրա նյութի ուսուցումը կազմակերպելու համար: Այս թեստի հիմնական նպատակը ոչ թե գնահատումն է , այլ յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը, նյութը չյուրացրած սովորողների բացահայտումը՝ նրանց կրթությունը բարելավելու նպատակով:

Ամփոփիչ թեստը, ի տարբերություն ձևավորող և հայտորոշիչ թեստերի, հիմնականում ստուգողական բնույթի է: Ամփոփիչ թեստերի հիմնական նպատակը տվյալ առարկայից սովորողի ծրագրային նյութին տիրապետելու մակարդակի ճշտումն ու գնահատումն է, դրանց առաջադրանքներն ու հարցերը պետք է կազմվեն առանձնակի ուշադրությամբ ու խնամքով : Դա նշանակում է , որ թեստ կազմելիս պետք է ապահովվեն թեստի հուսալիությունը, արդյունավետությունն ու հավաստիությունը:

Գնահատման սանդղակները կամ ռուբրիկները հնարավորություն են տալիս պարզելու , թե աշակերտնին չգիտի և ինչ կարող է անել , միևնույն ժամանակ դրանք տեղեկատվության կարևոր աղբյուր են ուսուցիչների, ծնողների

համար: Սանդղակը գնահատման ձև է, որը սյունակաշարերի միջոցով համադրում է սովորողների ըմբռնման որակը, հմտության աստիճանների տարբերակման չափանիշները և առաջադրանքների կատարման որակը Սանդղակը գնահատման հնար է, որն օգնում է ուսուցչի և աշակերտի փոխհամաձայնեցմամբ կենտրոնանալ կոնկրետ հարցերի վրա և կազմվում է այնպես , որ աշակերտը առաջադրանքը կատարելով ստանա որոշակի տեղեկություններ իր ուսումնառության մասին: Սանդղակն օգնում է աշակերտին հասկանալ գնահատականի իմաստը՝ հստակ պատկերացում տալով տվյալ գնահատականի համար պահանջվող աշխատանքի մակարդակի մասին, մատնանշելով թերություններ և ընդգծելով բացթողումները: Սանդղակն ուսուցչին հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել աշակերտի աշխատանքը: Գնահատման սանդղակների ցանկացած տեսակ մշակելիս անհրաժեշտ է կազմել տարբեր բարդության առաջադրանքներ՝ որակի , հմտությունների , յուրացվածության առումով՝ հաշվի առնելով սովորողների պատրաստվածության մակարդակը:

ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿԻ ՕՐԻՆԱԿ

Գնահատման չափանիշներ	1 Անբավարար	2 Բավարար	3 Լավ	4 Գերազանց
Աշխատանքի պատրաստում	Աշխատանքը կատարված է կոպիտ սխալներով, չի բնութագրում ներկայացված թեման, չի ներառում եզրակացություն և գրականության ցանկ	Աշխատանքը ուրվագծային բնութագրում է ներկայացված թեման, ներառում է ոչ հստակ եզրակացություն և գրականության ցանկ	Աշխատանքը բնութագրում է ներկայացված թեման, ներառում է եզրակացություն և գրականության ցանկ	Աշխատանքը ամբողջովին բնութագրում է ներկայացված թեման, ներառում է հստակ ներկայացված եզրակացություն և գրականության ցանկ
Աշխատանքի համար շնորհանդեսի պատրաստում	Աշխատանքի համար պատրաստված շնորհանդեսը պատրաստված չէ կամ չի արտացոլում թեմայի հիմնական դրույթները	Աշխատանքի համար պատրաստված շնորհանդեսը գրեթե արտացոլում է թեմայի հիմնական դրույթները	Աշխատանքի համար պատրաստված շնորհանդեսը արտացոլում է թեմայի հիմնական դրույթները	Աշխատանքի համար պատրաստված շնորհանդեսը ներառում է թեմային վերաբերող բոլոր անհրաժեշտ կետերը և արտացոլում է թեման ամբողջությամբ
Կատարած աշխատանքի ներկայացման ունակություն	ՈՒսանողը չի կարողանում ներկայացնել թեման	ՈՒսանողը աշխատանքը ներկայացնում է՝ թույլ տալով որոշակի սխալներ	ՈՒսանողը աշխատանքը ներկայացնում է, կիրառում ներկայացման տեխնիկական միջոցներ	Կատարված ինքնուրույն աշխատանքը ներկայացվում է ամբողջությամբ՝ բերելով օրինակներ և կիրառելով ներկայացման տեխնիկական միջոցները

Ձևավորող գնահատման գործիքները բազմազան են և ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է կիրառել նպատակային և հետևողականորեն: Կարելի է սկսել ձևավորող գնահատման ոչ ժամանակատար, ամենօրյա գործածության համար հարմար գաղափարներից:

1. *Արդյունավետ սկիզբ և ավարտ*

Կարևոր է դասի համար ապահովել արդյունավետ սկիզբ և ավարտ՝ օգտագործելով առաջին և վերջին 5 րոպեները: Տալիս ենք հարցեր անցած թեմայից կամ կիրառում կարճ հարցաշար: Ընդ որում, եթե էլեկտրոնային ռեսուրսները բավարար չեն, կարելի է խնդրել սովորողներին փոքրիկ թղթիկների վրա գրել յուրացրած և ոչ այնքան լավ յուրացրած հարցերը, գաղափարները և գցել երկու տարբերակված արկղիկների մեջ: Սա կօգնի հստակեցնել թեմայի յուրացման ամբողջական պատկերը: Իսկ եթե հնարավորություն կա օգտագործելու Google Forms, Poll Everywhere, Edulastic հարթակները, ժամանակի

մեծ տնտեսում կլինի: Դասի ավարտին սովորողները կարող են «3-2-1» մեթոդով անդրադառնալ իրենց աշխատանքին և ձեռքբերումներին, նշելով՝ 3 բան, որ յուրացրել են, 2 բան, որոնց մասին կուզեին ավելին իմանալ և 1 բան, որ չեն հասկացել: Ապա սովորողները կարող են շրջել սենյակում ևծանոթանալ միմյանց նշումներին, լրացումներ կատարել իրենց թերթիկներում: Կարելի է նաև սովորողներին առաջարկել ինքնագնահատման հարց՝ «Ի՞նչը ես այլ կերպ կանեի հաջորդ դասին»:

2. Նվազ ազդեցություն ունեցող թեստեր

Թեստերի կիրառումը արագ հետադարձ կապի հնարավորություն է տալիս և օգնում է լավ հասկանալ սովորողների կողմից հիմնական եզրույթների, տվյալների և գաղափարների յուրացումը: Կան հավելվածներ, օրինակ՝ Zipgrade-ը (https://www.zipgrade.com/), որոնց օգնությամբ կարելի է արագ դուրս բերել թեստային թերթիկները և կիրառել: Նվազ ազդեցության թեստերի կիրառումը հարմար է նրանով, որ դրանց արդյունքները չեն ազդում կիսամյակի գնահատականի ձևավորման վրա, այլ յուրաքանչյուր սովորողի համար բացահայտում են, թե թեմայի իմացության ինչ մակարդակ ունեն տվյալ պահին:

3. *«Մեծ եղբայրդ հետևում է քեզ»*

Ուսումնառության արդյունքները կարող են հեշտ չափելի լինել, անգամ եթե սովորողներին նման առաջադրանքներ են տրվում.

• Ընկերոջդ նամակ գրիր, որում բացատրում ես անցած թեմայի հիմնական գաղափարները:

• Նկարիր պատկեր, որը ակնառու կդարձնի թեման:

• Մտածիր նյութի շուրջ և հետո քննարկիր ընկերոջդ հետ:

Ուսուցիչը շրջում է դասարանում, նշումներ է անում կամ լրացնում է նախապես պատրաստած դիտարկման թերթիկը, որն ավելի հարմար է և հնարավորություն է տալիս ավելի նեղացնելու սովորողներին ուսումնասիրելու դիտանկյունը և կատարել արդյունավետ գրառումներ:

4. Ձևաչափը՝ հարցազրույց

Որպեսզի սովորողներն ավելի խորանան ուսումնասիրվող թեմայի մեջ, կարելի է օգտագործե լհարցազրույցի, բանավեճի և քննարկման ձևաչափերը: Կարելի է կազմակերպել նաև 3-րոպեանոց անհատական հարցազրույցներ սովորողների հետ: Սրա համար կարիք կլինի շատ ժամանակ ծախսել, սակայն հարկ չկա հարցազրույց անցկացնել բոլոր թեմաների և նախագծերի ժամանակ:

Որպես այլընտրանք՝ կարելի է սովորողներին բաժանել զույգերի և տալ հետադարձ կապի տարբերակ.

• Ասել ընկերոջը, թե ինչն իրեն դուր եկավ նրա ելույթում:

• Տալ մեկ հարց և պարզաբանել, թե ինչպես կարելի է բարելավել պատասխանը:

5.Արվեստ

Այն միջոցները, որոնք նախատեսում են դիտազննական ռեսուրսների շուրջ աշխատանք, նույնպես կարող են ձևավորող գնահատման գործիքներ դառնալ: Սովորողները կարող են նկարել կոլաժներ և քանդակներ ստեղծել, ինչը նրանց հնարավորություն կտա միավորել անցած նյութը մեկ ամբողջության մեջ: Նրանք կարող են բեմականացումներ կայացնել որևէ գրական թեմայով կամ անգամ պարով ցուցադրել բջիջների բաժանումը, ծաղկի բացվելը, բույսերի ծլելը և այլն: Ձևավորող գնահատման գործիքները տարբեր են, և յուրաքանչյուր դասավանդող կարող է ընտրել իրեն և իր դասարանին առավել հարմարը: Կարևորն այն է, որ ձևավորող գնահատումը բարձրացնի յուրաքանչյուր սովորողի՝ իր իսկ ձեռքբերումների, առաջընթացի գիտակցումը, իսկ դասավանդողին հնարավորություն տա ժամանակին փոխելու ուսուցման ընթացքը, հասկանալու սովորողների կարիքները՝ ամփոփիչ գնահատմանը ավելի պատրաստ դարձնելու համար:

Ժամանակակից դպրոցում, որպես գնահատման գործիքներ կարող ենք օգտագործել տարբեր ՏՀՏ-ներ: Այդ ՏՀՏգործիքներից է Google Forms-ը: Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց ձևավորող և միավորային գնահատում: Այս գործիքը ուսուցիչներին հնարավորություն է տալիս

● Միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված առաջադրանքներ

● Խմբագրել պատրաստի առաջադրանքները, պահպանել առցանց

● Հետևել սովորողների առաջադիմությանն առցանց և անմիջապես հարցման ժամանակ

● տարածել պատրաստի առաջադրանքներ

● Յուրաքանչյուր հարցի համար, ըստ անհրաժեշտության, սահմանել ժամանակ,

- Սովորողները առցանց տարբերակով հետևում են հարցադրումներին և նշում պատասխանները:

Այս գործիքը մեծապես նպաստում է նաև դասարանի կառավարման որակը վերահսկելուն: Կրթության բնագավառում տեղեկատվությունը համակարգի կառավարման հիմքն է: Վիճակագրական տվյալներն օգնում են դասարանի արդյունքների հավաքագրմանը, վերլուծմանն ու բնութագրմանը՝մ բացահայտելով այս կամ այն թեմայի յուրացման արդյունավետությունն ու որակը:

Այս գործիքը կարելի է կիրառել տարբեր տարիքային խմբերի հետ համապատասխան թեմաներով, զվարճանքի, կոնկրետ հարցեր քննարկման հանելու, կոնկրետ թիրախ խմբի հետքրքրող թեմաներ քննարկելու, տեղեկատվության համար: Ժամանակակից կրթական համակարգում գնալով ավելի շատ է շեշտը դրվում տեղեկատվության հետ աշխատանքի վրա: Սովորողների համար ավելի կարևոր է դառնում ձեռքբերել լրացուցիչ նյութեր, վերլուծել ստացված տեղեկատվությունը, կարողանալ եզրակացություններ անել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքում հանգամանորեն ներկայացվեց գնահատումը հանրակրթական դպրոցումէ իր բոլոր ձևերով, տեսակներով և առանձնահատկություններով:
Այսպիսով՝ գնահատումը տեղեկատվություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և, ըստ այդմ, հանրակրթուրյան բովանդակային և կազմակերպչական աշղատանքների արդյունքները ի մի բերելու և այն վերահսկելու բավականին լուրջ և բազմաբովամդակ գործընթաց է:

Ընթացիկ գնահատումը շարունակաբար ապահովում է տեղեկատվություն ուսուցման ընթացքն ուղորդելու , դասավանդման և ուսումնառության որակը բարձրացնելու համար: Այն կիրառվում է ողջ ուսումնառության ընթացքում:Բացառություն են կազմում կիսամյակային ամփոփիչ աշխատանքների, քննությունների գնահատումները:

Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման աստիճանի, ինչպես նաև՝ անձնային որակների ստուգումն է,ուսման որակի վերահսկումը:
Այպիսով, արդյունավետ գնահատումը հնարավորություն է տալիս սովորողներին՝ կիրառելով ուսուցման տարբեր ձևեր, մտավոր կարողություններ, դրսևորել գիտելիքների ամբողջությունը, հասկացությունների ընկալումն ու կարողությունները:
Ուսուցիչներին հնարավորություն է տալիս տեղեկատվություն ստանալ յուրաքանչյուր փուլի մասին՝ հաշվի առնելով սովորողների պահանջները և ուսուցիչների ուսումնասիրությունները:
Ինչպես նաև՝ հնարավորություն է ընձեռում ծնողներին , որ ծանոթանան իրենց երեխաների ուսումնառության և զարգացման վերաբերյալ փաստերին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ա. Ալեքսանյան, «Սովորողների ինքնավերլուծության և ինքնագնահատման մեթոդների կիրառման հիմնախնդիրը դասավանդման գործընթացում», ՀՊՄՀ, Երևան, 2016:

2. Լ. Ալեքսանյան, «Ձևավորողգնահատմանգործիքներ:Հինգգաղափար», հղումը՝https://lib.armedu.am/files/resource/files/2022-07-07/4b1e3da2fa47b99223c71749923bb8cf.pdf, հասանելիէ՝ 2022, նոյեմբեր

3. ԿՁՆԱԿհիմնադրամ, «ԳնահատմանվերաբերյալՀՊՁ-ովառաջարկվողփոփոխությունները», հղումը՝https://lib.armedu.am/files/resource/files/2022-07-11/2b2703c1568910a9c680b2ab7a6e30a5.pdf, հասանելիէ՝ 2022, նոյեմբեր

4. ՀայաստանիՀանրապետությանԿառավարություն, 4 փետրվարի, 2021 թվական, որոշում N 136, «Հանրակրթությանպետականչափորոշչիձեվավորմանեվհաստատմանընդհանուր դրույթներ», հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788, հասանելիէ՝ 2022, նոյեմբեր